# աԱ





ա

ա Ա

















# իԻ





ի

ի Ի



















# ու Ու







ու

ու Ու

ու ու Ու



















# ա Ա ի Ի ու Ու









ա ու

ի ա

ու ի

Ա Ու Ի

ա ի ու Ա Ի Ու















# սՍ րՐ



ա



ս ա –

սա ուր

ասա սուր

ուս

սուս



ս ա ր –



– ա ս

սար սուր

սս րր Ս Ր



– ա ս ու ր







սուր ուս

սար սուս

արա Արա Արուս

սարի



սուր





Արա սուս արա

ար իր ուր

աս իս ուս

րա րի րու

սա սի սու

Ս Ր սար

# Ն ն



| — | ու | ■ |

| ■ | ու | — |

| | | |
|---|---|---|
| անուն | Սուսան | նա |
| սիրուն | Սասուն | Աննա |
| Սիրուն | Սիրան | Նինա |



Արան  ունի:

:

Նն Նն Նինա

| | | | |
|---|---|---|---|
| սիրուն | Աննա | սա | Սանասար |
| Սուսան | Նինա | նա | |
| Սիրան | Սասուն | սար | |



Արան ու Նինան

Նինան  ունի:

Արան  ունի:



| | | |
|---|---|---|
| — | ա | ր |
| ս | — | ր |
| ս | ու | — |

| | | |
|---|---|---|
| ա | ս | ա |
| — | — | ի |
| — | ր | — |

Նի, Ան → նա

Սի → րուն, րան

# Տտ Կկ



ա ու | ա

| | | |
|---|---|---|
| տուն | տատ | կատու |
| տունկ | տատիկ | կատար |
| տանկ | տարի | կատակ |

Ս — րա, րուս, նիկ

կա — տու, տակ, տար

տա — տի, տիկ, րի

Սիրուն տիկնիկ

Աննան սիրուն տիկնիկ ունի: ,

Սիրուն տիկնիկ, նանիկ արա:

տ տ կ կ Տ Տ Կ Կ

| | | | |
|---|---|---|---|
| սունկ | Արտակ | Աննա | ա, սա, տուր |
| տունկ | Միսակ | Նունիկ | Ասատուր |
| տանկ | Տիրան | Սուրիկ | Արարատ |

Արտակն ու Աննան,
Սուսանն ու Արան
Սուրիկին տուն տարան:



**Կատու**

Աննան կատու ունի, իսկ կատուն՝ սուր : Կատուն  ու  կուտի:

՝

տ ա տ

կ ա տ ա կ

| | | | |
|---|---|---|---|
| ս | ու | ն | կ |
| տ | ու | — | — |
| տ | ա | — | — |

Տիրան, կատակ






| | | | |
|---|---|---|---|
| — | ատիտ | ասուր | |

| | | | |
|---|---|---|---|
| մի | ուր | սար | մատ — արմատ |
| միս | մուր | սուր | արի — Մարի |
| ամիս | ամուր | մասուր | Միսակ |

| | | | |
|---|---|---|---|
| կամար | Արմիկ | Մանիկ | արտ |
| մարմար | Արման | Մանուկ | մարտ |
| կարմիր | Արտակ | Արամ | արմատ |



## Կարմիր մատիտ

— Մարի, Արտակին մի մատիտ տուր:

Մարին կարմիր մատիտ ունի, Աննան կարմիր  ու  :

Իսկ Արան ունի կարմիր  ու կարմիր  :

կարմիր — մատիտ
կարմիր — մասուր

—

Մ մ Մ մ Մարի. Միսակ

## Արտուտիկ



Արտում մի արտուտիկ կար:
— Արտուտի՛կ, արտուտի՛կ,
Սիրու՛ն արտուտիկ:

սուր — մատիտ
կարմիր — մատիտ

ամուր — արմատ
ամուր — կարաս

# Շ շ



| ու | ն |

ուշ
նուշ
անուշ

շուն
աշուն
անուն

անուշ նուշ
սիրուն շուշան
կարմիր մատիտ

Անուշ
Մանուշ
Շուշիկ



Շ ա ր ա



Շ ա ր ի կ

**Շարան**

Շարան մի կարմիր  ու սիրուն շուն ունի:
Շարիկն ու Շարան  տուն տարան:

*Շ շ շուն, անուշ նուշ*

Մանուշակ
Մանուշակ

շուշան
Շուշան

սարի շուշան
Շուշան տատիկ



**Շուշիկ**

Շուշիկ, Շուշիկ,
Իմ սիրուն,
Շուտ արա, շուտ
Արի տուն:

Արի, տամ նուշ՝
Շատ անուշ,
Ու մի տիկնիկ՝
Սիրունիկ:



*Շ Շուշան տատիկ*

# Է(է)Է



կ ր ա ն

| | | | | |
|---|---|---|---|---|
| է | էմմա | էկրան | Կարեն | Կարինե |
| էր | էմին | մենակ | Սուրեն | Մարինե |

## Էմման



Սա մեր Էմման է: Նա մի սիրուն  ունի:

 ում տետրեր, մատիտներ, ներկեր ու  կան:

Էմման աշակերտ է:

*Է է Է է էկրան, Էմմա*

# Օ(օ)Օ





ր ա – ու – –

| | | |
|---|---|---|
| օր — նոր | օր | Մարո |
| Օրի — մորի | օտար | Կարո |
| Օնիկ — Սոնիկ | օրինակ | Նորիկ |

## Նոր շոր



— Օրի, տես, Մարոն նոր շոր ունի, — ասում է Նարինեն:

— Շատ սիրուն շոր է, — ասում է Օրին:

Մարոն նոր շոր ունի, Օրին նոր կոշիկներ, իսկ Նարինեն նոր տիկնիկ:

*օ Օ Օրին նոր կոշիկներ ունի:*

| | | | |
|---|---|---|---|
| մորի<br>մորենի | Սոնա<br>Սոնիկ | Օնիկ<br>Նորիկ | Մարո<br>Մերո |



## Մեր Սոնան

Մեր Սոնան շատ աշակերտներ ունի: Նա իր աշակերտներին ասում է.

— Էմմա՛, ասա՛ ա, ի, ու, է, օ:

Էմման ասում է՝ ա, ի, ու, է, օ, իսկ Օրին՝ օր, նոր, էր, մեր:

— Օնի՛կ, ասա՛ ս, ր, մ, ն, տ, կ, շ:

Օնիկն ասում է՝ ս, ր, մ, ն, տ, կ, շ, իսկ Նունեն՝ սար, սուր, միս, ամիս, մատ, արմատ:

Մարինեն ասում է՝ Կարո, Մարո, Սարո, իսկ Սուսաննան՝ Անուշ, Մանուշ, Սիրանուշ:

— Էմման ու Օրին, Օնիկն ու Նունեն, Մարինեն ու Սուսաննան իսկական աշակերտներ են,— ասում է Սոնան:



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ն | կ | ու | — | — |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ն | — | ու | — | տ |

| | | | |
|---|---|---|---|
| ընկեր<br>ընտիր | ընկա<br>ընտանի | ընտիր մորի<br>ընտանի կատու | մի մատ — իմ մատը<br>մի տուն — մեր տունը |

## Ընկերները



Միսակն ու Միսակը աշակերտներ են: Միսակը տասը տարեկան է, իսկ Միսակը՝ ինը:

Միսակը շատ է սիրում Միսակին:

Միսակը Միսակի մտերիմ ընկերն է:

Ը ը Ը ը ընկեր



## Անուշիկը

Սա Անուշիկն է: Նա ինը տարեկան է: Մարտի տասին նրա տոնն էր: Սուսաննան նրան մի նկար կտա, Կարենը՝ մի տիկնիկ, Արմինեն ու Արտակը՝ շատ սիրուն մանուշակներ:

աներ — կրակ

մաներ — տնակ





ս ա ▢ ո ր

▢ ո ր

| | | |
|---|---|---|
| լար | Ալիկ | լուսին |
| լուր | ուլիկ | Լուսինե |
| լոր | իլիկ | լուսամուտ |



## Լալկան Լալան

Լալան շատ լալկան է:

— Տես, էլի լալիս է, — ասում է Լուսինեն:

— Մի լար, մի լար, անուշիկ Լալա, — ասում է Արմինեն:

Էմման նուշ է տալիս, Կարինեն՝ տիկնիկ...

Իսկ Լալան էլի լալիս է ու լալիս:

**Շուտասելուկ**

*Սարի ուսին սիրուն լուսին:*
*Սիրուն լուսին սարի ուսին:*

Լ Լ Լ Լ Լալա.

•••

շարել
կարել
ընկնել

Լուսիկ
լուսակիր
կարուսել

ամուր լար
ընտիր սալոր
սիրուն լոր



## Լուսիկը

Լուսիկը  ունի: Նա նոր շորեր է կարում:

— Լուսիկ, իմ տիկնիկին մի նոր շոր կարիր, — ասում է Կարինեն:

— Մի կարմիր շոր կկարեմ, — ասում է Լուսիկը:



**Կար**

Կար է անում
Մեր Սարին,
Շոր է կարում
Տիկնիկին:

**Շուտասելուկ**

Լուսիկ, Լուսիկ, լուսերես,
Լուսնի մասին լուր ունես:









պապ
պապիկ
շապիկ

կարապ
կապար
պարան

ընտիր պանիր
ամուր պարան
սպիտակ ամպ

## Մեսրոպ պապը

Սա Մեսրոպ պապն է: Նա Պապինի, Կարպիսի, Լուսիկի ու Նարեկի պապիկն է: Պապը շատ է սիրում Նարեկին: Նա ամեն օր լինում է պապի մոտ: Մեսրոպ պապը միշտ նոր  է տալիս նրան:





լամպ
ամպ
կապ

ըմպել
ըմպանակ
պատրաստել

կարպետ
Կարապետ
պարապել

Պարիս
Կարպիս
Պետրոս

## Ուլիկն ու պուլիկը



Տատիկն ուներ
Մի ուլիկ
Ու սիրունիկ
Մի պուլիկ:

Մկկում էր
Ուլիկը.
Նա կոտրել էր
Պուլիկը:

պա — պիկ, րիսպ, նիր, րել, րան, րապ, շար, կաս, լար, րարտ

*Պ պ Պ Պարիս, Պետրոս*






Ն | ա | ■

վանկ
վատ
նավ

վերմակ
վարպետ
կարպետ

Վասակ
Վարսիկ
Վարոս

■ | ա | ր | –

## Նավը

Շավարշը նավապետ է, իսկ Վարոսը՝ նավաստի: Շավարշը շատ լավ է վարում իր նավը:

Նավաստի Վարոսը նավապետ Շավարշի մոտ նավ վարել է սովորում:

*Վ վ Վ վ Վարոսը նավաստի է:*

| | | | |
|---|---|---|---|
| վերարկու | նավ | վարսավիր | լավ ու վատ |
| վերելակ | նավավար | Ճանավարհ | վեր ու վար |
| սովորել | նավապետ | Վարշամ | |



## Կոշկակար Վանիկը

Վարպետ Կարապետը լավ կոշկակար է: Նա շատ աշակերտներ ունի: Մեր Վանիկն էլ նրա մոտ կոշիկ կարել է սովորում: Վանիկը շուտով ընտիր կոշիկներ կկարի:

| | | |
|---|---|---|
| | մա | |
| | վա | |
| | կա | |
| շա | | րել |
| | լա | |
| | նկա | |
| | սովո | |




| | | |
|---|---|---|
| | ա | վ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ս | ա | | ն | ա | կ |

| | | | |
|---|---|---|---|
| հերոս | օրապահ | Միհր | Օհան |
| հովիվ | պահարան | Վահան | Վահե |
| պահել | սահնակ | Շահեն | Վահրամ |



## Հավը

— Միհր, Շահեն, Վահան, Օհան, մեր սպիտակ հավը ո՞ւր է, — ասում է Հուրիկը:

— Կորեկի արտում է, — ասում է Շահենը:

— Հավը հատիկ շատ է սիրում: Հատիկի ու հասկի համար էլ մտել է արտը, — ասում է Վահանը:

[illegible] հավը հատիկ է ուտում:

| | | | |
|---|---|---|---|
| հատակ | սահնակ | տրորվել | հավ |
| հատուկ | պահակ | շրորալ | կավ |
| հատիկ | Սահակ | հարմարվել | լավ |

մըկ — րատ = մկրատ

տը — նակ = տնակ



## Հասմիկն ու Հրանտը

Հասմիկը լավ կար է անում: Նա մի սուր մկրատ ունի: Մկրատով կտրում է կտորը ու իր տիկնիկի համար շորեր կարում:

 Իսկ Հրանտը լավ վարպետ է: Նա էլ  ու ունի: Հրանտը Հասմիկի տիկնիկի համար տնակ է պատրաստում:



կա■արան

■ ո —

| | | |
|---|---|---|
| հայ | մայրիկ | այր |
| Հայկ | հայրիկ | այս |
| Հայկուհի | Հայաստան | այսպես |

## Կայարանում

Մայիսի 7-ն է: Հայկը մեկնում է Մոսկվա սովորելու: Կայարանում նրան տեսնում է Հայկուհին: Հայկուհին մոտենում է նրան ու ասում.

— Հայկ, հայրիկս Մոսկվայում է, այս նամակը կտանես հայրիկիս:

— Իհարկե, Հայկուհի, — ասում է Հայկը: — Հասնելուն պես նամակը կտամ իրեն:

| | | | | |
|---|---|---|---|---|
| յ կուր | ալ | հուր | պար | վար |
| Յ յ կույր | այլ | հյուր | պայր | վայր |

| | | | |
|---|---|---|---|
| հայ<br>հայերեն<br>հայուհի | վայ<br>վայր<br>վայրենի | Հայկ<br>Հայկուշ<br>Հայկուհի | Արամայիս<br>Հայկարամ<br>Հայկանուշ |

## Պայուսակը



Այս պայուսակը նոր է: Պայուսակը Լիային նվիրել է իր հայրիկը:

Լիան շատ է հավանում իր նոր պայուսակը: Պայուսակում նա պահում է իր տետրերը, մատիտներն ու ներկերը:

Աշակերտը անպայման պիտի պայուսակ ունենա:

| | |
|---|---|
| այս<br>պես | այսպես |
| Արա<br>Մայիս | Արամայիս |
| Հայկ<br>Անուշ | Հայկանուշ |
| այս<br>այն > պես | |
| Հայկ<br>Արամ | Հայկարամ |





| | | | |
|---|---|---|---|
| զով<br>վազ<br>վիզ | զինվոր<br>պարտեզ<br>սուզվել | Զավեն<br>Զարիկ<br>Զորիկ | վազել<br>վզկապ<br>զսպանակ |



## Արզականում

Զավենը ապրում էր զով Արզականում: Զարուհին, Եզնիկը, Զորիկն ու Դարզիկը հյուր էին եկել նրան:

Ընկերներով ազատ վազվզում էին հարազատ վայրերում, մարզվում:

Զավենը իսկական մարզիկ է, — ասաց Զարուհին:

*զ Զ Զ Զավենը լավ ընկեր է:*

| | | | |
|---|---|---|---|
| սազ | զատ | մազ | Զարեհ |
| հազ | ազատ | մարզել | Զորայր |
| վարազ | հարազատ | մարզիկ | Զարուհի |



## Մարզիկ Զորիկը

Զորիկը լավ մարզիկ է: Նա այսօր էլ իր ընկերների հետ մարզվում է:

— Զորիկ, շուտ արա, շուտ, — ասում է Զարեհը:

— Վազիր, վազիր, հիմա Հայկազը կհասնի, — ասում է Զորայրը:

Ու Զորիկը վազում է ու վազում:

# Ղ ղ
# Խ խ



ա ո

| | | | | |
|---|---|---|---|---|
| օղ | խոտ | սեղան | շախմատ | խաղող |
| տող | սեխ | աղվես | տախտակ | խաղալ |
| ղեկ | սոխ | աղավնի | Մեխակ | Ղուկաս |



## Աշխատասեր Խորենը

Խորենը շատ աշխատասեր տղա է: Նա լավ է սովորում ու լավ էլ աշխատում է: Ազատ օրերին նա Ղուկասի հետ աշխատում է պարտեզում: Այստեղ Խորենը խաղողի վազերն է խնամում, իսկ Ղուկասը՝ սալորենին:

— Լավ աշխատողը շատ պտուղ կստանա, — ասում է Խորենի հայրը:

*ղ ղ Ղ Ղ Ղուկաս խ խ Խ Խ Խորենը*

*Նախ աշխատիր, հետո՛ խաղա:*

| | | | | |
|---|---|---|---|---|
| աղ | վախ | աղմուկ | աղավնի | մեխակ |
| խաղ | վախկոտ | խաղաղ | Աղավնի | Մեխակ |
| մաղ | անվախ | խաղալ | Ղազարոս | խոխաբար |



## Վախկոտ Նապաստակը

Նապաստակը վազվզում էր խոտերում: Մեկ էլ տեսավ մոտենում է աղվեսը: Աղվեսն էլ նապաստակին տեսավ:

Նապաստակն իսկույն պահ մտավ խոտերում: Իսկ խորամանկ աղվեսն անաղմուկ մոտենում էր:

Վախկոտ Նապաստակն սպասում էր:

Հետո...

| | |
|---|---|
| օղ | օղեր |
| խոզ | խոզեր |
| սեղան | սեղաններ |



# Ց ց

ն ուղ



որեն

| | | | |
|---|---|---|---|
| ցող | ցորեն | ցնցուղ | Ցողիկ |
| ցախ | ցողուն | ցըն — ցուղ | Ցոլակ |
| ցանց | ցանել | օրացույց | Մացակ |



## Ցորենը

Ցոլակը տրակտորով վարում էր արտը:

— Տես, Ցողիկ, տրակտորը վարում է արտը, — ասաց Կարինեն:

— Մեկը վարում է, իսկ այս մեկն էլ ցանում է, — ասաց Կարոն:

— Այո՛, ցորեն է ցանում: Ցորենից համով լավաշ հաց են պատրաստում, — ասաց Մացակ պապը: — Ցորեն ցանողը միշտ էլ համով հաց կունենա:

*ց ց Ց Ց Ցոլակը ցորեն է ցանում:*



ա – ի ո



ու ե ն ի

Ռ ռ

| | | | |
|---|---|---|---|
| նուռ | ուռի | առավոտ | Ռուզան |
| լուռ | ուռենի | հեռախոս | Սառա |
| ամառ | կեռաս | Ռոմանոս | Ռիմա |



## Հեռախոս

Տղաները խաղում էին պարտեզում:

— Իսկ ո՞ւր է Ռուզանը, — հարցրեց Հուսիկը:

— Նա իրենց տանն է, — պատասխանեց Ցոլակը:

— Հիմա կխոսեմ նրա հետ, — ասաց Հովիկը ու մոտեցավ հեռախոսին:



— Ալո՛, ալո՛, Ռուզա՛ն:

— Լսում եմ, Հովի՛կ, խոսիր...

— Ռուզա՛ն, հենց հիմա Սառայի ու Հասմիկի հետ արի մեզ մոտ: Այստեղ շատ ուրախ է, անպայման արի:

ռ ռ Ռ Ռ Ռուզան

| | | | |
|---|---|---|---|
| ուռենի | սառույց | առվակ | Ռոստոմ |
| կեռասենի | սառնարան | հեռու | Ռազմիկ |
| սավառնակ | վառարան | անտառ | Ռեհան |



## Անտառում

Անտառում հրաշալի է: Ամռանն այստեղ միշտ էլ զով է լինում: Կաղնին ստվեր է անում, իսկ ուռենին օրորվում է մեղմ հովից:

Ռուզանը լուռ նստել է ուռենու տակ ու նայում է վազող առվակին:

Խորենն ու Ռազմիկը խաղում են առվակի մոտ: Ցողիկը նկարում է, իսկ Սառան կերակրում է աղավնիներին:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տառ | կեռ | լուռ | կռունկ | սառը | վառել |
| տառ | կեռ | լուռ | կռունկ | սառը | վառել |

Պատմիր:



# Եե



(ե = յ + է)




| | | | | |
|---|---|---|---|---|
| Ելակ | երազ | եղյամ | երկու | երեկո |
| եղնիկ | Երեմ | երկար | երամ | Երանուհի |

## Եղնիկը

Եղիշեն, Երեմն ու Երանուհին անցնում էին անտառով:

— Երեխաներ, եղնիկը, եղնիկը, — ասաց Երանուհին:

— Ո՞ւր է, ո՞ւր է, — հարցրեց Եղիշեն:

Երանուհին ցույց տվեց: Երեխաները շուռ եկան եղնիկի կողմը:

Եղնիկը տեսավ նրանց: Նա վազեց անցավ առվի մյուս կողմը ու հետ նայեց: Նա սիրուն ու երկար վիզ ուներ:

Երեխաները շատ ուրախացան:



| | | | |
|---|---|---|---|
| ես — տես | երակ | երեկո | Եկարան |
| եկ — շեկ | եկավ | Եսայի | Երեխա |
| եզ — հեզ | երամ | Եզնիկ | Եղիշե |
| ետ — հետ | եռալ | Երազիկ | Երանուհի |



## Երազիկը

Այս ամառ Երազիկն իր տատիկի մոտ էր:

Այսօր նա հետ եկավ: Ամենից շուտ նրան տեսավ Արմինեն:

— Մայրիկ, Երազիկը եկա՜վ, Երազիկը եկա՜վ, — ասաց նա:
Վազելով նրան մոտեցավ Եղիշեն:
Երազիկը, Եղիշեն ու Արմինեն միասին տուն եկան:

— Տատիկը մոշ է ուղարկել, — ասաց Երազիկը: — Մո՛շ կեր, Արմինե՛, անո՜ւշ արա, Եղիշե՛:

*Ե ե Ե Երազիկ*

# ո Ո



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | — | խ | ա | ր |

(ո = վ + օ)

| | | | |
|---|---|---|---|
| որ | ոզնի | ոտ — հոտ | որսի շուն |
| որս | ոսկի | որ — լոր | ոսկե մատանի |
| ոսպ | որոտ | ող — հող | խաղողի ողկույզ |



## Ոզնի

Աշուն էր: Երեխաներն աշխատում էին պարտեզում: Ոստանիկը խաղողի վազի տակ մի ոզնի տեսավ: Վազեցին եկան Ոսկանն ու Եղիշեն:

— Ոզնուն մի՛ վնասիր, Ոստանիկ, — ասաց Ոսկեհատը: — Դայիկն ասում է, որ նա պարտեզը պահպանում է վնասատուներից:

— Ո՞ր վնասատուներից, — հարցրեց Ոսկանը:

— Մկներից ու առնետներից, — պատասխանեց Ոսկեհատը:

Ոզնին պարտեզի պահապանն է...

ոսկի ոսկյա ոսկե | ոհմակ որսալ ողողել | որսկան որտեղ ոսկոր | ողնաշար որոտալ ոլորել | Ոսկան Ոսկեհատ Ոստանիկ



## Էսկիմոսը

— Ո՞վ է այս տղան, — հարցրեց Ոստանիկը պապին:

— Էսկիմոս է, տղաս, — պատասխանեց պապը:

— Իսկ որտեղ են ապրում էսկիմոսները, — հարցրեց Ոսկեհատը:

— Էսկիմոսներն ու նենեցներն ապրում են հեռավոր հյուսիսում, — պատասխանեց Ոսկան պապը: — Հյուսիսում միշտ ցուրտ է: Էսկիմոսներն այնտեղ որս են անում: Իսկ հյուսիսում որս շատ կա: Որսի մսից համեղ խորտիկներ են պատրաստում...

Էսկիմոսները շատ են սիրում իրենց ցուրտ երկիրը:



*Ո ո Ոստանիկ*

# և ԵՎ



(և = յ + ե + վ
կամ է + վ)




նավ արև Եվա | տերև վերև Սևան

Սևակ
Երևան
Արևշատ



## Սևանը

Շատ սիրուն է մեր Սևանը: Ամառը Սևանում միշտ զով է լինում: Կիրակի ու տոն օրերին Սևանում շատ հյուրեր են լինում Երևանից, Կիրովականից, Լենինականից և այլ տեղերից:

Շատերը նավակ են նստում: Մյուսները լողում են, խաղում և ուրախանում: Մի մասն էլ պառկում է ավազների վրա՝ արևից սևանալու:

*և և (և = յեվ կամ էվ) արև, նաև*

| | | | |
|---|---|---|---|
| արևոտ օր<br>տերևախիտ անտառ | սև կտոր<br>լավ հարևան | Երևան<br>Նաև | ևուռկ<br>Եղևնի |

Երևան = Ե — րե — վան
Սևան = Սե — վան

Եղևնի = Ե — ղև — նի
Նաև = Նա — և

## Ո՞ւմն է արևը



Երեխաներն ուրախ խաղում էին պարտեզում: Մեկ էլ սկսեցին կռվել:

— Արևը մերն է, մեր տան վերևն է,— ասում էին Եվան ու Արևիկը:

— Արևը մերն է, մեր տան վերևն է,— ասում էին Լևոնն ու Սևակը:

—Արևը ամենինն է,— ասաց Եղիշե պապը:

Եվ երեխաները հաշտվեցին:

# Ժ ժ




| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ա | մ | ա | ց | ու | յ | ց |

| | | | |
|---|---|---|---|
| ժամ<br>ժիր<br>ժայռ | ժպիտ<br>ժպտալ<br>երաժիշտ | ժամանակ<br>ժապավեն<br>ժամապահ | Անժիկ<br>Ժիրայր<br>Խաժակ |

## Անժիկը



Ժաննան ամեն օր Անժիկին մանկապարտեզ է տանում:

Անժիկն առավոտյան լվացվում է ու սանրվում: Իսկ կարմիր ժապավենը նրա մազերին կապում է Ժաննան:

Ժամը իննին Անժիկը մանկապարտեզում է լինում: Այնտեղ նա խաղում է իր ընկերների՝ Ժիրայրի, Խաժակի ու Վերժինեի հետ: Իսկ երեկոյան ժամը վեցին նա նորից տանն է լինում:

*Ժ ժ Ժաննան ժապավենն է կապել Անժիկի մազերին:*



բ Բ
փ Փ

ի ղ



ամ ակ

| | | | | |
|---|---|---|---|---|
| բակ | բուռ | բամակ | բերել | Փայլակ |
| փակ | փուռ | բամբակ | փորել | Բենիկ |

## Մեր բակի երեխաները

Այս տարի մեր բակի երեխաները լավ աշխատեցին: Մայիսին փխրեցրին հողը և սկսեցին մշակել: Ռուբենն ու Փայլակը տնկիներ բերեցին: Բենիկն ու Ծողիկը փոսեր փորեցին: Սմբատն ու Արփիկը սերմեր առան: Հետո բոլորը միասին տնկեցին տնկիները և ցանեցին սերմերը:

Այժմ մեր բակը հրաշալի պարտեզի է նման:

— Ապրեն մեր բակի ժիր ու աշխատասեր երեխաները, — ասում է Բարսեղ պապը:

բ բ Բ Բ փ փ Փ Փ
Բենիկն ու Փայլակը լավ աշխատեցին:



գ Գ
ք Ք



իր

| | | | |
|---|---|---|---|
| գիրք | շաքար | գիշեր | Գագիկ |
| գրքույկ | քամի | քաղաք | Զաքար |
| բերք | գնացք | փոքրիկ | Քնարիկ |

## Գիրք

Գիրքը մեր բարեկամն է: Այն մեզ պատմում է անցյալի, ներկայի ու ապագայի մասին: Նրանից մենք նոր-նոր բաներ ենք սովորում:

Գրքից մենք իմանում ենք ուրիշ երկրների մասին: Նրա շնորհիվ մենք սիրում ենք գեղեցիկն ու բարին...

Սիրենք ու պահպանենք գիրքը՝ բոլոր գիտելիքների աղբյուրը:

գ գ Գ Գ Գրիգոր
ք ք Ք Ք Քնարիկ



Չ չ

ո | ու ն

ո ր ս

| | | | |
|---|---|---|---|
| չոր | գրիչ | Խաչիկ | չվող երամ |
| չորս | բրիչ | Հրաչիկ | չոր միրգ |
| ինչ | ոչխար | Հրաչուհի | կանաչ խոտ |

## Կռունկների չուն

Աշուն էր։ Եղանակը ցրտել էր, խոտը չորացել։

Խաչիկն ու Հրաչուհին խաղում էին այգում։ Նրանց հետ էր նաև փոքրիկ Աչիկը։

— Կռունկները, կռունկները, — բացականչեց Աչիկը։

— Նայիր, Հրաչուհի, կռունկները երամ են կազմել և չվում են տաք երկրներ։

— Էլ հետ չեն գալու, — հարցրեց Հրաչուհին։

— Ինչպես չէ։ Գարնանը կրկին հետ են գալու, — պատասխանեց Խաչիկը։

— Գնաք բարով, սիրելի կռունկներ, — կանչեցին երեխաները։

*չ Չ Չուքարյան Հրաչուհի*

Դ դ Թ թ



| | | | |
|---|---|---|---|
| դուր | դաս | գառ | գնդակ |
| թուր | թաս | թառ | թիթեռ |
| տուր | մաս | տառ | թմբուկ |

## Սասունցի Դավիթը

Վաղո՜ւց, շա՜տ վաղուց էր այդ։ Թշնամին գրավել էր մեր երկիրը։ Նա ավերում էր մեր գեղեցիկ քաղաքները։ Թալանում էր մեր գյուղերը։ Սպանում էր մեր մարդկանց։ Չէր խնայում նույնիսկ փոքրերին։

Մի օր էլ Դավիթը համբերությունից դուրս եկավ։ Նա պատյանից հանեց իր թուրը և գնաց թշնամու դեմ։ Դավիթը հաղթեց ու բոլոր թշնամիներին դուրս քշեց մեր երկրից։

*դ դ Դ Դ թ թ Թ Թ*

*Թուրը Դավթի ընկերն է։*

Թամար
Թորոս

Թաթուլ
Դերենիկ

Անդրանիկ
Մեղա

թաշկինակ
դաշնամուր



| | |
|---|---|
| գույնզգույն տերևներ | թռվռուն թիթեռներ |
| գույ — նզգ — գույն | թռը — վը — ռուն |

## Թիթեռ

Ամառ էր: Երեխաները դուրս էին եկել դաշտ: Խոտերի վրա ամենուրեք պես-պես թիթեռներ էին թռվռում:

— Օ՜հ, որքա՜ն շատ թիթեռներ կան, — ասաց Թամարը:

— Որքա՜ն գեղեցիկ են, — ասաց Թաթուլը: — Տեսե՛ք, տեսե՛ք, կարմիր ու կապույտ, սև ու սպիտակ, դեղին ու մոխրագույն...

Ես թիթեռ եմ, փափկաթև եմ,
Թռվռում եմ այս այստեղ...

# Ծ ծ



| | ի | | ե | ռ | ն | ա | կ |
|---|---|---|---|---|---|---|---|

## Ծառատունկ



Գարուն է: Դպրոցի հողամասում ծառատունկ է: Աշակերտները պտղատու ծառեր են տնկում:

— Եկե՛ք ծիրանի ծառ տնկենք, — ասում է Արծվիկը:

— Ինչո՞ւ միայն ծիրանի, ուրիշ ծառեր էլ կարելի է տնկել, — ասում է Ծովինարը:

— Իհարկե՛, կարելի է տնկել նաև թթենի, բալենի, թզենի, փշատենի ու այլ ծառեր, — ասում է Ծովակը:

— Ծառեր շատ պետք է տնկել, երեխաներ, — ասում է ընկեր Պայծառը: — Բայց տնկելը բավական չէ, պետք է նաև խնամել այդ տնկիները, որ չչորանան:

ծ Ծ Ծ Պայծառ, Ծովինար.

ջուր
ջահ
փունջ

ջութակ
ջնջել
ջրվեժ



Ջ ջ

Նարինջ
ջանասեր
ջերմաչափ

Ջիվան
Ջանան
Երջանիկ

| ջ | ու | թ | ա | կ |
|---|---|---|---|---|



## Ջուրը

— Ջուրը կյանք է,— ասում է Ջիվան պապիկը։— Առանց ջրի բույսերը, կենդանիներն ու մարդիկ չեն կարող ապրել։

Ջուրը անհրաժեշտ է մեզ՝ մեր ծարավը հագեցնելու, մրգերն ու բանջարեղենը լվանալու համար։ Ջուրը հարկավոր է թեյ, կերակուր ու քաղցրավենիք պատրաստելու համար։ Ջուրը պետք է նաև լողանալու և հագուստները լվանալու համար։

Առանց ջրի չէին լինի քաղաքներն ու գյուղերը զարդարող այգիները։

ջ Ջ ջութակ, Ջանան

Ճ ճ



ճիպոտ
կապիճ
ճանճ

Տաճատ
ճարոտ
օճառ

Մուրճ
Պերճ
Պերճուհի

| ճ | ու | տ | ի | կ |
|---|---|---|---|---|



## Բկլիկ ճուտիկը

Թուխսը իր ճուտիկների հետ քուջուջ էր անում ճահճի մոտ։ Ճուտիկներից մեկը, ճանճի ետևից վազելով, ընկավ ճահիճը։

Մայրը շատ չարչարվեց, բայց չկարողացավ ճուտիկին ճահճից հանել։ Նա, կտցին մի ճիճու առած, մոտեցավ ջրափոսին։

Ճուտիկը հենց որ ճիճուն տեսավ, ուժ առավ ու ճահճից դուրս թռավ։

— Ա՜յ դու, բկլիկ ճուտիկ,— ասաց մայրը և ճիճուն դրեց նրա բերանը։

ճագար | ճահիճ | ճիճու

# Ֆ ֆ





| | ու | տ | բ | ո | լ |
|---|---|---|---|---|---|

ֆուտբոլ | ուֆ
ֆշշալ | տուֆ

Օֆիկ | Ֆուտբոլը խաղ է:
Սոֆիկ | Տուֆը քար է:

## Ֆուտբոլ

Ֆուտբոլը լավ խաղ է: Ո՞վ չի սիրում ֆուտբոլ խաղալ:

Ռաֆիկն ու Ֆրունզիկը ամառը ճամբար են գնում: Ազատ ժամերին ճամբարի տղաների հետ միշտ ֆուտբոլ են խաղում: Ֆլորան ու Նունուֆարն էլ դիտում են նրանց խաղը և ուրախանում:

Ահա Ֆրունզիկը պատրաստվում է հարվածելու գնդակին: Դարպասապահ Ռաֆիկը ջանում է բռնել այդ գնդակը:

Բոլորն անհամբեր սպասում են:

*Ֆ ֆ Ֆ ֆ Ֆուտբոլը լավ խաղ է:*

# Ձ ձ





| | ու | կ |
|---|---|---|

ձու | ձախ
ձի | ձող

տանձ | ձնծաղիկ | Ձորագյուղ
սանձ | ձմերուկ | Ձորաղբյուր

## Ձկնորսը

Ձոնիկը հմուտ ձկնորս է: Նա ամեն կիրակի քրոջ՝ Փառանձեմի հետ գնում է ձուկ որսալու:

Ձոնիկը կարթին որդ է ամրացնում և նետում գետը:

Հենց որ ձուկն ուզում է ուտել որդը, ընկնում է կարթը: Թելն անմիջապես շարժվում է: Ձոնիկը քաշում է թելը, և կարթի վրա երևում է փայլուն ձկնիկը:

Փառանձեմը ձուկը գցում է ջրով լի դույլի մեջ: Երեկոյան քույր ու եղբայր ուրախ-ուրախ վերադառնում են տուն:

*Ձ ձ Ձ Ձոնիկը լավ ձկնորս է:*